ԺԸ. ԴԱՐՈՒ ԵՐԿՈՒ ՁԵՌԱԳԻՐՆԵՐ

Ա.

ԿԱԹՈՂԻԿԷՈՒԹԻՒՆ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԴԱՒԱՆՑ

ՀԻՆ ԹԻՒ 7 — 1781

Կազմ՝ *հին արեւելեան խաւաքարտեայ կաշեպատ*։ Մեծութիւն՝ 17·5×11·5։ Թուղթ՝ 210։ Դրութիւն՝ *միասիւն*։ Գիր՝ *նօտրգրածև շեղագիր*։ Հանգամանք՝ *լաւ պահուած*։ Պատկեր՝ *Թղ*. 1, 2, 206*բ*, 210։ Խորագիր եւ սկզբնատառ՝ *կարմրագիր*։ Գրիչ՝ *Մարտիրոս սարկաւագ*։ Տէր՝ *Գրիչը*։ Տեղի՝ *Պոլիս, Իւսկիւտարի Սելամիէ թաղ*։ Ժամանակ՝ 1781։ Յիշատակարան՝ 183*բ*, 205*բ*։ Տեղեկութիւն՝ *սեփականութիւն Գր. Աւագ ա Տօնապետեանի*։

Մասնաւոր է՝ Կաթողիկէութիւն Լուսաւորչադաւանց, *ուր կան*.

1. — *Թղ*. 3*ա*. «*Կաթողիկէութիւն Լուսաւորչադաւանց համաձայն հին ընդհանրական եկեղեցւոյ։ Ցուցեալ խզ վկայութեամբք սրբոյն* Դիոնիսիոսի Արիսպագացւոյ *անուանեալ գրքին, ի* Կոստանդնուպոլսեցի Գէորգ Վարդապետէն, *ի նախատինս և յամօթս յաւիտենական ... ախթարմայից մերոց։ Թուին հայոց ՌՃՂԹ*» (1750)։

2. — *Թղ*. 3*ա*. «*Առաջաբանութիւն, Թուին հայոց ՌՃՂԸ, ես վերջինս վարդապետաց հայոց ընթերցայ հեղինակերէն զսրբոյն Դիոնիսիոսի Արիսպագացւոյ անուանեալ գիրքն, ի Թաղն Պէկօլիս*» *են*.։

3. — *Թղ*. 5*ա*. «*Ցանկ Գրքիս*»։

4. — *Թղ*. 8*ա*. «*Վկայութիւն առաջին, մասն առաջին։ Յաղագս աւուր ծննդեան տն մերոյ յսի քսի։ Ի մէջ գրքին յաղագս երկնաւոր քահանայապետութեան*» *են*.։

5. — *Թղ*. 35*ա*. «*Մասն երկրորդ։ Յաղագս միայններգործութեան քսի, երկրորդ տես ի մէջ սոյն այս վկայութեանս, թէ չարադրողն գրքիս զներգործութիւն յսի մարդկային աստուածութիւն է անուանեալ*» *են*.։

6. — *Թղ*. 38*ա*. «*Վկայութիւն երկրորդ։ Յաղագս ճշմարտութեան աւետարանացն հայոց։ Դարձեալ ի մէջ գրքին երկնաւոր քահանայապետութեան ի վերայգրեալ անգին գրեալ է այսպէս*» *են*.։

7. — *Թղ*. 43*բ*. «*Վկայութիւն երրորդ։ Յաղագս անփոփոխ պահելոյ զառաքելական աւանդութիւնս, ի մէջ գրքիս յաղագս եկեղեցական քահանայապետութեան*» *են*.։

8. — *Թղ* 46*ա*. «*Վկայութիւն չորրորդ։ Յաղագս երեք ընկղմամբ մկրտելոյ, և յաղագս ի մասին ընդ մկրտութեան տալոյ զրոշմն*» *են*.։

9. — *Թղ*. 46*բ*. «*Վկայութիւն հինգերորդ։ Յաղագս զբոլոր մարմին մկրտելոյ*» *են*.։

10. — *Թղ*. 47*ա*. «*Վկայութիւն վեցերորդ։ ա. Մասն առաջին։ Յաղագս նշանակութեան մկրտութիւն բանին*»։ — բ. *Թղ*. 47*բ*. «*Յաղագս փրկարար մահուան բանին այս*» *են*.։

11. — *Թղ*. 56*բ*. «*Վկայութիւն եօթներորդ։ Յաղագս հարկաւորութեան դրոշմին, նոյն ժամայն յետ մկրտութեան*» *են*.։

12. — *Թղ*. 57*ա*. «*Վկայութիւն ութներորդ։ Յաղագս հարկաւորութեան հաղորդելոյ ի մարմնոյ և յարենէն քի յետ մկրտութեան*» *են*.։

13. — *Թղ*. 57*բ*. «*Վկայութիւն իններորդ։ Դարձեալ յաղագս նոյն հարկաւորութեան*»։

14. — *Թղ*. 58*ա*. «*Վկայութիւն տասներորդ։ Յաղագս խնկարկելով շրջագայելոյ պատարագողին ընդ ամենայն դասս*»։

15. — *Թղ*. 58*բ*. «*Վկայութիւն մետասաներորդ։ Յաղագս արտաքս զերախայս ի պատարագէն և թէ ոյք են երէխայքն*»։

16. — *Թղ*. 59*ա*. «*Վկայութիւն երկոտասաներորդ։ Յաղագս արտաքոյ եկեղեցւոյ կանգնելոյ այնոցիկ, որք ոչ հաղորդին*»։

17. — *Թղ*. 59*բ*. «*Վկայութիւն երեքտասաներորդ։ Յաղագս ի դրունս տաճարին կանգնելոյ դպրաց*»։

18. — *Թղ*. 60*ա*. «*Վկայութիւն չորեքտասաներորդ։ Յաղագս ողջոյն տալոյ միմեանց ի պատարագին*»։

19. — *Թղ*. 60*բ*. «*Վկայութիւն հնգետասաներորդ։ Յաղագս նորամուտ լինելոյն ջրախառնութեան պատարագին*» *են*.։

digitised by A.R.A.R.@

20. — Թղ. 60բ. «Վկայութիւն վեշտասաներորդ. Յաղագս հանդերձ պաշտօնէից պատարագելոյ» ևն.։

21. — Թղ. 62ա. «Վկայութիւն եօթնետասաներորդ. Յաղագս ամենեքեան ի միոջէ հացէ հաղորդելոյ» ևն.։

22. — Թղ. 62բ. «Վկայութիւն ութնետասաներորդ. Յաղագս հաղորդութեան ի հացէ և ի բաժակէ» ևն.։

23. — Թղ. 67ա. «Վկայութիւն իննետասաներորդ. Յաղագս խորհրդաւոր լինելոյ, խնկարկելով շրջագայութիւն պատարագողին» ևն.։

24. — Թղ. 68ա. «Վկայութիւն քսաներորդ. Յաղագս հարկաւորութեան երգարանութեանց պատարագին»։

25. — Թղ. 69ա. «Վկայութիւն իա. Յաղագս հարկաւորութեան և խորհրդաւորութեան ողջունի պատարագին» ևն.։

26. — Թղ. 70ա. «Վկայութիւն իբ և իգ. ա. Մասն առաջին. Յաղագս մասնակցութեան ի միոջէ հացէ, ի միոջէ բաժակէ» ևն.։ բ. Թղ. 71ա. «Մասն երկրորդ. Վճարանութիւն յաղագս միոյ բնութեան Քսի» ևն.։

27. — Թղ. 97ա. «Վկայութիւն իդ. Յաղագս մեռոնին ի յիւղոյ ծաղկանց» ևն.։

28. — Թղ. 97բ. «Վկայութիւն իե. Յաղագս ոչ կատարելոյ մկրտութիւն առանց դրոշմի» ևն.։

29. — Թղ. 98ա. «Վկայութիւն իզ. Յաղագս առնելոյ զհոգին որ ի ձեռն դրոշմին» ևն.։

30. — Թղ. 98բ. «Վկայութիւն իէ. Յաղագս ծայրագոյն քահանայապետ լինելոյն ամենայն հայրապետաց»-ևն.։

31. — Թղ. 99ա. «Վկայութիւն իը. Յաղագս ոչ լինելոյ մկրտութիւն առանց դրոշմի» ևն.։

32. — Թղ. 99բ. «Վկայութիւն իթ. Յաղագս միոյ գոյութեան Քսի» ևն.։

33. — Թղ. 100ա. «Վկայութիւն լ. Յաղագս համակարգ լինելոյ ամենայն առաքելոց» ևն.։

34. — Թղ. 107ա. «Վկայութիւն լա. Յաղագս խորհուրդ եկեղեցւոյ լինելոյն մեռոն օրհնելոյն, և կարգ կատարելոյն ի վերայ ննջեցելոց» ևն.։

35. — Թղ. 110ա. «Վկայութիւն լբ. Յաղագս օծելոյ ննջեցեալ քահանայս» ևն.։

36. — Թղ. 110բ. «Վկայութիւն լգ. Յաղագս կատարեալ հատուցման, ի հատուցման ի յարութեան յաւուրն» ևն.։

37. — Թղ. 111ա. «Վկայութիւն լդ. Յաղագս լուսաւորութեան ամենայն հայրապետաց» ևն.։

38. — Թղ. 125բ. «Վկայութիւն լե. Յաղագս խորհրդաւորութեան օծելոյ ըզննջեցեալ քահանայից» ևն.։

39. — Թղ. 126ա. «Վկայութիւն լզ. Յաղագս հաղորդելոյ զմանկունս» ևն.։

40. — Թղ. 126բ. «Վկայութիւն լէ. Յաղագս հարկաւորութեան հաղորդելոյ զմանկունս» ևն.։

41. — Թղ. 127ա. «Վկայութիւն լը. Յաղագս բղխման հոգւոյն սրբոյ ի հօրէ միայն» ևն.։

42. — Թղ. 129ա. «Վկայութիւն լթ. Յաղագս նոյն բանիս» ևն.։

43. — Թղ. 129բ. «Վկայութիւն խ. Յաղագս միոյ ներգործութեան Քսի» ևն.։

44. — Թղ. 130ա. «Վկայութիւն խա. Յաղագս հաստատութեան ամենայն հայրապետաց» ևայլն։

45. — Թղ. 131բ. «Վկայութիւն խբ. Յաղագս նորաձեւ լինելոյն պատմութիւն չնացող կնոջն ի մէջ աւետարանին յօհաննու» ևն.։

46. — Թղ. 138ա. «Վերոգրեալ քառասուն և երեք վկայութիւնքն հելլենացերէն» (յունարէն)։

47. — Թղ. 147ա. «Խորհուրդք սրբոյն Դիոնիսիոսի Արիսպագացւոյ անուանեալ գրքին. արտահանեալք և թարգմանեալք բառ առ բառ ի հելլենացւոց լեզուէն ի հայ բարբառ, խորհուրդ լուսաւորութեան։ Քահանայապետն որ կամի, զի ամենայն մարդիկք մի ընդ միոջէ» ևն.։

48. — Թղ. 151բ. «Խորհուրդ կատարման մեռոնի։ Ըստ նոյն ժողովման կերպի, անկատարից կարգքն արտաքսին» ևն.։

49. — Թղ. 152բ. «Խորհուրդ քահանայական կատարմանց։ Քահանայապետն որ առ քահանայապետական կատարումն ածի» ևն.։

50. — Թղ. 152բ. «Խորհուրդ սքեմաւորական կատարման։ Քահանայն կանգնի առաջի աստուածային սեղանոյն» ևն.։

digitised by A.R.A.R.@

51. — Թղ. 153բ. «Խորհուրդ ի վերայ արքայադստեր ննջեցելոյ։ Անձայրն քահանայապետն ժողովեալ զօրքագան գաւառն» ևն.։

52. — Թղ. 154ա. «Եղբայրակցութիւն Թարգմանողին։ Ո՞ւր է սա վերջին օծումն ֆրանկաց» ևն.։

53. — Թղ. 163բ. «Վերջ գրքիս։ Ընթերցողն գրքիս այսօրիկ դատեսցէ այժմ, միթէ զայսպիսի գրեանս ընթերցողն կարող է, թէ կամենայ եւ ֆրանկ դառնալ» ևն.։

54. — Թղ. 166ա. «Թուին հայոց ՌՃՂԹ, որ է այս տարիս» ևն.։

55. — Թղ. 168ա. «Ցանկ և ցուցակ այբբենական նշանաւոր իրաց մատենիս, յորում համարն, զերեսս թղթոցն ցուցանէ ախթարմայից մերոց ուղղութիւն» ևն.։

56. — Թղ. 185ա. «Թուղթ առ Գրիգորիսի հայոց կաթողիկոսի, գրեալ է յեղբօրէ նորին Ներսէս եպիսկոպոսի հրամանաւ նորին, ի միջագետս ասորոց։ Ցամայք կոչեցեալ նահանգին յաղագս մերոյ ազգիս քահանայից երկաբաբանեալ անմտաբար ընդ միմեանս։ Ոմանց ասել զածութեան բնութիւն չարչարեալ, և մեռեալ ընդ մարմնոյն։ Եւ ոմանց զմարմինն միայն։ Եւ արդ գիցուք զբանս նախ առ այնոսիկ որ զբնութիւն Աստուծոյ յանդգնին ասել չարչարեալ և մեռեալ ի վերայ խաչին» ևն.։ (Հմմտ. Ընդհանրական Թուղթք Սրբոյն Ներսէսի Շնորհալւոյ, տպ. Երուսաղէմ, 1871, էջ 240–289)։

57. — Թղ. 194ա. «Թուղթ երանելոյն Ներսէսի հայոց հայրապետի առ Մանուէլ թագաւորն հոռոմոց։ Խոստովանիմք որպէս ուսաք ի հարցն սրբոց զհօրն յաւիտենին առանձնաւորութեանն անծին և անսկիզբն» ևն.։ (Հմմտ. անդ, էջ 120–130)։

Յիշատակագրութիւն. —

1. — Թղ. 183բ. «Փառք ... Որոյ կամօք և աջողեցութեամբն դէպ եղև ինձ բազմայանցինս, ի ՌՄԼ (1781), յունվարի ը հանդիպիլ մեծիմաստ և յաղթահանձար յարգելի Սեփաննոս Ամիրային, առ ի շնորհաւորել զոր ծննդեան Քրի առն մերոյ, ընդ որոյ և յետ երկար խօսակցութեան ի վր ճշմարիտ հաւատոյ և օրինացս մերոց, հանեալ զայս ազդու և զամենահատու սուրս, որ ընդդէմ ընտանի թշնամեացն մերոց, աղուեսաբարոյ խաբերայից և հերձուածողաց (որ է առաջին [ջնջուած «ձեռագիր» բառը. փոխադրիչ իրն է] հեղինակի պատուական գրքոյս) եցոյց ինձ, և ես մինչ տեսի, խիստ սաստիկ ըղձիւ հարայ ի սէր սորա, որ և նա յօժար սրտիւ ստիպեաց զիս զանարժանս օրինակել ըզսոյնս։ Եւ ես բազմամեղս առեալ զսա զուարթագին դիմօք և մեծաւ ուրախութեամբ, համարեալ զիս մեծագոյն ինն զանձի հանդիպեալ, սկսայ գրել և օրինակել ի ՌՄԼ (1781) մերում թուականի, յունվարի ի. ին. մեծաւ զգուշութեամբ, զի մի տառ ինչ ի բառ սղըրգիցի և կամ բառնիցի։ Եւ աղաչեմք զառ, զի որոշեալ տարահեցին նշանաւոր բանքն Խ և Գ վկայութեանցն գրքիս։ Այլև արարաք զհամարոտ ցանկ գլխաւոր իրաց, որք պարունակին այսմ գրքոյ, զի խնդրողքն զիր ինչ անաշխատ առձեռն պատրաստ գտանիցեն՝ համարելով երեսաց թղթոցն։ Եւ զի վերաժամանեցին սմանք գործք հարկաւորք, վս այն մնաց անկատար. սոյնս սակաւ ինչ ժամանակս, և յետոյ սկսեալ վերստին. զօղանալով ըղժամանակս աւարտեցաք ի ի և Թ յուլիսի։

Արդ՝ որք հանդիպիք այսմ նոր և չքնաղ հեղինակութեան գրքոյս, որ ընդդէմ երկաբնակաց խօսի, համեղ և համառօտ վարդապետութեամբ ջատագովելով զճշմարտութիւն հաւատոյ և զաւանդութիւն առաջին և հին կաթուղիկէ ամենասուրբ եկեղեցւոյն քի, զոր և այժմ մեք ունիմք հայաստանեայցս որ եկեղեցի, և օգտիք ի սմանէ յիշեցէք ի մաքուր աղօթս ձեր, նախ՝ զշարագրողն գրքոյս զտր Գէորգ բազմաշխատ և զածարան վարդապետն։ Երկրորդ՝ յիշեսջիք զվերոգրեալ տուօղն ինձ զօրինակն սորին զչքնաղիմաստ, քաջազէտ և զգերզգօն Ակնեցի Պետրոսեան Սեփաննոսեան օրհնեալ զջատագովն ճշմարիտ հաւատոյս մերոյ։ Երրորդապէս յիշեսջիք ի քս և զիս զյոգնամեղս, որ մեծաւ փափագանօք օրինակեալ գրեցի զսոյն, ի վայելումն իմ և յիմոյնոցն, և ի յիշատակ ապագայ եկեղեցւոյն,

digitised by A.R.A.R.@

այլ և ի յօգուտ հեռնեալ մոլորելոցն մերայնոց, ընդ հովանեաւ մեծահռչակ և աքանչելագործ և ածընկալ կենատուն Խաչին սոյ, որ ի Սելամիէ թաղն Իւսկիւտարու, գլխաւորապէս աներձան սպասաւորաց նորին սրբութեան, որ և եմ պատրաստական ծառայ ուղղափառ ազգիս հայկազնոյ՝ Մարտիրոս սարկաւագ Կոստանդնուպոլսեցի»:

2. — Թղ. 205բ. «Սիրով ծանիք լուսաւորչադաւան և ուղղահաւատ ազգդ ի հայոց, զի զօլով իմ սիրահօր ուղղափառ դաւանութեան և քանիցս որ և երանաշնորհ նախնեացն մերոց, տեսեալ զերկուս թուղթս սոյն Ներսէսի Լամբրոնացւոյն, մեծաւ փափագանօք օրինակեալ եդի ընդ պանծալի գրքոյս ի մի տուփ, իբր զկնիք և զվկայ ճշմարիտ բանից վարդապետիս»:

Արդ՝ ով ածաւէր և բարեմիտ ընթերցօղք յարժամ ընթեռնոյք զսա, և կամ չահիք ինչ ի սմանէ, յիշեցէք ի սոյն աղօթս ձեր զիս զաշխատօղս սորին՝ զամենամեղ աներձան Մարտիրոս սարկաւագս հանդերձ ննջեցելովք իմովք, որ և յիշօղքդ յիշեալ լիջիք և քաւ փրկչէն մերմէ ի յաւուրն յետնում, ամէն»:

Օրինակեցաւ սա ի հայրապետութեան տն Ղուկասու ամ հայոց կաթողիկոսի, և ի պատրիարքութեան երկուց աթոռոցն սրբոյն եէմի և կոստանդնուպօլսոյ, տն յովակիմայ և տն Յոհաննիսի ճգնազգեաց արքեպիսկոպոսաց՝ յամի տն 1781, և ի միրում թուականին ՌՄԼ յօգոստոսի Ա, ի Սելամիէ, ի թաղն Իւսկիւտարու»:

Բ.

ԱԿՆ ԼՈՒՍԱՏՈՒ

ՀԻՆ ԹԻՒ 8 — 1780

Կազմ՝ հին արևելեան խաւաքարտեայ կաշեպատ, վրան ճնշուած զարդերով։ Մեծութիւն՝ 17·5 × 11։ Թուղթ՝ 185։ Նիւթ՝ թուղթ։ Գրութիւն՝ միասիւն։ Գիր՝ նօտրգիր։ Տող՝ 22։ Հանգամանք՝ լաւ պահուած։ Պատկեր՝ 1, 2, 3բ, 30բ–32, 33բ, 157–160, 181բ–185։ Խորագիր՝ կարմրագիր։ Գրիչ՝ Սահփանեան։ Տեղի՝ հաւանաբար Կ. Պոլիս։ Ժամանակ՝ 1780։ Յիշատակարութիւն՝ Թղ. 150ա։

Մատեանս է՝ Ակն Լուսատու, սկիզբը՝ Թղ. 3ա-ի մէջ ոսկեզ շրջանակի մէջ առնուած։

1. — Թղ. 4ա. «Մանկունք սոյ եկեղեցւոյ իսկ պարտին, ի սկիզբն մինչ ի վախճան աւարտին, ըզսք զրեանս քննել որք են ի քարտին, ըստ Յոհաննու բանին որ ասէ հրամանին» են.։ 9 տուն, սկըզբնագիրք «Մանուէլի է» կը կազմեն։

2. — Թղ. 5ա. «Առ ազգեցութիւն իմն բարեմիտ ընթերցօղս։ Էական բան և բնութենական որդին հօր այ և յաւիտենական ծնունդ» են.։ Վերջը՝ Թղ. 30ա, ուր վարի լուսանցքին վրայ գրուած է. «Տրուպ ծոյ քսի Սրմաքէշ փորիկ Մանուէլ Թէոդորոսեան. միայն ևեթ դըպիր տոհմիւ Կեսարեան»:

3. — Թղ. 33ա. «Գիրք որ կոչի Ակն Լուսատու։ Հայրապետութեան գերագահ աթոռոյն աստուածաէջի տեառն Մինասայ սրբազնակատար կաթուղիկոսի, և ինքնակալ քահանայապետի ամենայն հայոց։ Եւ ի պատրիարքութեան սրբոյն Սաղիմայ տեառն Թէոդորոսի՝ վեհափառ և արհիեպիսկոպոսի։ Եւ ի պատրիարքութեան տեառն Յակոբայ մեծի պօլսոյս արժանաժառանգ պետի և հռչակաւոր ածաբանի ի թվին ՌՄԱ։ Հաւաքեցեալ և շարադրեցեալ ի Սրմաքէշ և փոքրիկ Մանուէլէ կոստանդնուպօլսոյ կեսարեան, ընդ հովանեաւ բազմաժողով եկեղեցւոյ սրբուհւոյ աստուածածնին»:

4. — Թղ. 34. «Յաղագս թէ զինչ իցէ եկեղեցին։ Եկեղեցին է ժողովումն ամենայն հաւատացելոց, ենթարկեցեալ ուղղափառ հաւատոյ և դաւանութեան» են.։ Վերջ՝ Թղ. 150ա։

5. — Թղ. 150ա. «Տեսիլ եղբայր Բարկեղոնի ժողովն կանոնեաց թէ հաւասար զաւագութիւն ունիցի աթոռն ըստամպօլու, ըստ հին հռոմայոյ, ըստ ժողովոյն ճԾ սուրբ հարցն» են.։

6. — Թղ. 151ա. «Ցանկ որ ցուցանէ զթղթահամարսն, առաքելոց իշխանութիւնքն ածանցեցան, ի յաջորդս, և ոչ անուանքն» են.։

7. — Թղ. 161ա. «Վիճաբանութիւն յաղագս բնութեան քրիստոսի։

digitised by A.R.A.R.@

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ԹՈՒՂԹ ԿԵՂԵՍՏԻԱՆՈՍԻ ԱՌ ՆԵՍՏՈՐ

Թղթոց Գիրքը կը պարունակէ հայերէն թարգմանութիւնը Հռոմի Կեղեստիանոս եպիսկոպոսին առաջին թուղթին ուղղուած Նեստորի։ Այդ թուղթը սակայն թերի է, Թղթոց Գրքին ձեռագրին մէջէն թերթ մը ինկած ըլլալուն պատճառաւ։ Այդ թերին լրացնելու մտքով պատրաստեցինք ներկայ յօդուածը։

Իբրեւ բնագիր առինք Ս. Աթոռոյս ձեռագիրներէն թիւ 960 ժողովածոյին պարունակած թուղթը, համեմատեցինք զայն ուրիշ երեք ձեռագիրներու եւ տպագրեալին հետ, եւ նշանակեցինք կարեւոր տարբերութիւնները։

Աստեւ կու տանք մեր համեմատութեանց մէջ գործածուած նշանագիրները եւ համապատասխան օրինակներուն մասին հակիրճ ծանօթութիւններ։

Ա = Ձեռ. Ս. Յ. Թ. 960, Թկ. 1602, ժողովածոյ, նոտրագիր, էջ 390–393։

Բ = Ձեռ. Ս. Յ. Թ. 1138, Թկ. 1668, ժողովածոյ, նոտրագիր, էջ 693–5։

Գ = Ձեռ. Ս. Յ. Թ. 999, Թուական նորոգութեան 1668, ժողովածոյ, մասամբ բոլորգիր եւ մասամբ նոտր, էջ 553-5, նոտրագիր։

Դ = Ձեռ. Ս. Յ. Թ. 858, Թկ. 1686էն առաջ, ժողովածոյ, նոտրագիր, էջ 517-9։

Ե = Գիրք Թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 241–2, վերջը թերի։

Երանելոյն Կեղեստինոսի Եպիսկոպոսի Հռոմա, թուղթ առաջին առ Նեստոր:

Ոչ գիտեմ ուստի ի մերս հասանել(1) լսելիս, իբր թէ հաւատ ինձ հեղել(2) ի քէն նորաձեւս, որ է արտաքոյ բարեպաշտութեան, այլ գլուխ քոյոց հաւատոց ասնես արտաքս, քանզի զարմացումն մերձ է առ մեզ, եթէ դու որ յիմաստութիւնն մեծագոյնս խորհեցեալ, եւ վայելչիցս գիտութեան բարձրութիւն բարձրացեալ, զիարդ այդպէս վաղվաղակի յանգիտութեանց ընկղմեցար խորխորատ։ Իսկ եթէ այսպէս որպէս բանս հաստատէ, թշնամանել լինի ուրեմն ի քէն Երրորդութեանն(3) համագոյութիւն, ուրացեալ լինի եւ արժանաւոր պատիւ Աստուածածին(4) Մարիամու։ Վասն որոյ պատշաճաւոր համարիմ ըստ քեզ եւ առ քեզ եւ ընդդէմ քո զասացեալն որ գաշնելով ապաղակէ, եթէ բազում դպրութիւնքդ զքեզ ի մոլորութիւն դարձուցին։ Բայց ես ոչ դարձուցին միայն ասեմ այլ եւ զանցուցին եւ։ Քանզի ձգեցեր զձեռս քո առ ի յաստուածամարտութիւն, եւ զօտի ածել տարեալ եղեր ուր ոչն կամէիր, եւ ոչ գիտէիր. զի թէ էր գիտացեալ, ոչ արդեւք զԱստուած խորհէիր ասնել(5) քեզ ընդդիմամարտ, եւ կամ ընդդէմ խթանի աքացել(6), որ ոչն էր քեզ կարգադրեալ։

Ուստի եւ վայելուչ կարծեմ յաղագս քո ասնել զՄօսէսեան ձայնն(7) փախ, եւ ասել ինչ այլաբանելով ընդ քո յեղափոխութեան հաւատոցդ, մանաւանդ թէ յանհաւատութեանդ կամաց, ասեմ, այս այլ յիմար եւ ոչ իմաստուն, ո՞չ սա ինքն է

(1) հասանէ, Ե։
(2) յեղեալ, Ե։
(3) Երրորդութիւնն, Դ։
(4) Աստուածածնին, Ե։
(5) առնել, Չունի Ե։
(6) աք ածել, Բ Գ Դ։
(7) զՄովսէսեանն ձայն, Ե։

Տես զի տէրն մեր Յիսուս Քրիստոս ըստ բնութեան մի անուանի, անուամբ բնութեան ի միակի թուոյ զածութեան նորա, իմանալով» եւն., վերջը՝ «Այս պատրոյ մինն վերայիշել պարտի յակօրն էր, որ այսպէս բազում անգամ յաղթահարեալ եւ խայտառակեալ ի յօհաննէս վարդապետէն եւ սկսամայ ճանաչել զճշմարտութիւնն, ապա ապագրել ետ ի հռոմ քաղաքի, զվերագրեալ վկայութիւնն մեր յաղագս միոյ բնութեան քսի ի մէջ մեկնութեանն Աւետարանին իւրոյ» եւն.։

Յիշատակագրութիւն. «Ստեփաննոս քարտուղարէ գրեցեալ ապրիլ ՌՄԻԹ»։

ԱՒԵՏԻՍ ՆԵՐՍԷՍԵԱՆ

Պէյրութ

digitised by A.R.A.R.@